



Ա. ՇԱՀԻՆՅԱՆ

ՓՈԽԹԿՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԿԱՄ ՍԱՐԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ՎԱՆՔԸ

Մոկաց վանքերից ոչ մեկը Մոկաց աշխարհի հայ և բուրդ ազգաբնակչության մեջ այն հարգանքն ու հմայքը չի ունեցել, ինչպիսին ունեցել է Փութկու կամ Սարի Ս. Գևորգ վանքը: Նա կառուցված էր Մոկսից Գավաշ տանող ճանապարհի վրա, Նդերով լեռան հարավային ստորոտում, Գաղի սարի վրա: Վանքը Փութկու Ս. Գևորգ էր կոչվում Փութկու անունը կրող գյուղի մոտ գտնվելու պատճառով, իսկ Սարի Ս. Գևորգ էր կոչվում Նդերովի (բարձրությունը՝ 3500 մետր) սարի վրա գտնվելու պատճառով:

«Սեր» Մոկաց բարբառում նշանակում է երկու ձորի մեջ մնացած բարձրություն: Զորերից անցնող ջրերը հետզհետե խորացել են և միջի մասը մնացել է բարձր, որն ապա անվանվել է «սեր» (ծեր, ծայր), իսկ գաղը մի բույս է, որն ունի ասեղնաձև տերևներ, բույնն ու ձյուղերը հարմար վառելիք են, և միաժամանակ վաղ գարնանը խոշոր անասունների համար անասնակեր:

Գեղեցիկ էր Փութկու վանքի դիրքը, իրեն շրջապատող ահեղի լեռների ծոցում: Հյուսիսային կողմից բարձրանում էր Նդերով լեռը իր խիստ թեք և քարքարոտ լանջերով: Արևմտյան կողմից՝ Դեղին քար (Բարեգար) կոչված լեռն իր սրածայր գագաթով և բուսականությամբ, հարուստ ջրառատ լանջերով, հարավային կողմից՝ Մերիկ լեռը, որի դեպի հյուսիս նայող կողմը ծածկված էր յուրահատուկ արոտավայրերով, իսկ դեպի Փութկու գյուղը նայող կողմը՝ բազալտի քարածալոներով, տեղ-տեղ մի մետր բարձրության հասնող գագեթով, որը տեղացիք անվանում

էին «տավրի գաղ»: Հարավ-արևելյան մասում բարձրանում էր Զմին (ծմակ) լեռը՝ գլխին բազալտի հսկա սաղավարտ: Ստորոտները արոտավայրեր էին և հսկա այրեր, որոնցից մեկն անվանվում էր Ծղնավորի այր և վերագրվում էր Վարդանանց պատերազմի պատմաբան Նդիշին: Իսկ հյուսիս-արևելյան մասում փռված էր Գեռա Նազոն իր ընդարձակ փեշերով, մատչելի լեռնալանջերով և արոտավայրերով, և եթե Գեռա Նազոն, իր փռած ծուխն հետևանքով, մի քիչ ընդարձակ էր դարձնում Փութկու երկիրը, ապա առաջին շորս գագաթները խստությամբ սեղմել էին Փութկու վանքը իրենց գրկի մեջ, ստեղծել էին խոր-խոր ձորեր, որոնց միջից գահավիժում էին և դեպի Փութկու վանքն էին շտապում լեռնային վտակներ աշխույժ աղմուկով, իսկ ձմեռվա ամիսներին, երբ փչում էին հյուսիսային ուժեղ քամիներ, լեռների կատարներին, որոնք նայում էին Փութկու վանքի կողմը, տեղացող ձյունից ստեղծվում էին «կավանդկ»-ներ, որոնք հետզհետե ծանրանալով կոտրվում էին և չկարողանալով պահպանել հավասարակշռությունը, գլորվում էին ցած և սկիզբ էին դնում «ուսի»-ների, որոնք ահեղի ուժով և դղրդյունով հոսում էին դեպի ցած, իրենց առջևից սրբելով ձյունը, քարերը և բերում լցնում էին Փութկու վանքի շուրջը եղած ձորերը: Այդ ձնակույտերը ամառ ժամանակ մեղմացնում էին Փութկու կլիման, պահպանում էին Փութկու գետերի ջրերի մակարդակը: Զնից ազատված տեղերում, շարունակում էին աճել այնպիսի բույսեր, որոնք հատուկ են միայն վաղ գարնան, այն է՝ խավարածիլը,

դաղձը, ձնծաղիկը և այլ ծաղիկներ, որոնք կարելի է ձարել Գուժկու վանքի շրջակայքում մինչև ուշ աշնանը:

Տեղացի հայ ժողովրդի մեջ պահպանված էր հետևյալ ավանդությունը՝ Փուժկու կամ Պուտկու Ս. Գևորգ վանքի մասին: Երբ Բեդար՝ գյուղի հայ ժողովուրդը մահմեդականություն է ընդունել, գյուղի ժամհարը Ս. Գևորգի մասունքը դրել է պուտուկի մեջ, շալակել ու փախել է և երբ նա հասել է այժմյան տեղը, մասունքը պուտուկից թոնլ է, մտել մի բարի մեջ և աղոթել է կառուցվել է եկեղեցի, որի համար էլ կոչվել է Պուտկի, որը հետագայում փոխվել է ու դառել Փուժկի, Փուժկու:

Մեծ էր նաև վանքի դերը Գավաշի և Մոկսի միջև հաղորդակցության պահպանման տեսակետից: Եվ Մոկսից հյուսիս ընկած գավառների հացահատիկները սակավությունը և Մոկսից գավառի քաղցրահամ պտուղների և պարենների, գյուղատնտեսական այլ մթերքների առատությունը ստեղծել էին այդ մթերքների փոխանակման անհրաժեշտությունը Եղերովից հարավ և հյուսիս ընկած շրջանների միջև: Այդ փոխանակությունը կատարվել է միմյանց Նոնրովի վրայով՝ Փուժկու վանքի ճանապարհով: Մոկսից տանձը և առատ ընկուղը հրապուրում էին մինչև իսկ վանի լճի հյուսիսում ապրող քրդական ցեղերին և նրանց քարավանները, բաղկացած մեծ մասամբ սև եղներից, մտնում էին Մոկսից երկիրը Փուժկու միակ ճանապարհով և նրանց «հո-հոն» ամբողջ սեպտեմբեր—հոկտեմբեր ճանապարհին լսվում էր Փուժկուց մինչև հարավ ընկած մրգառատ գյուղերում:

Այդ ճանապարհը անցնում էր Եղերովի վրայով, 3 300 մետր բարձրության վրա: Գավաշից դեպի Մոկս, կամ Մոկսից դեպի Գավաշ Փուժկու վրայից անցնող ուղեւորը, լինի ամառ կամ ձմեռ, անպայման պիտի հանգրստանար և օթևաններ վանքում:

Ձմեռ ժամանակ Մոկսից Գավաշ անցնողները հաճախ օրերով սպասում էին Փուժկու վանքում, օթևանում, սնունդ էին ստանում, մինչև որ երեկոյան կողմը արագադըր կանչեր¹, իսկ վաղ առավոտյան, խանջիի ուղեկցությամբ, ճանապարհը շարունակում էին Եղերովի վրայով:

¹ Բեդար գյուղը Մոկսից քրդաբնակ գյուղերից մեկն էր և գտնվում էր Մոկսից գետի ստորին հոսանքում, Տիգրիսի մեջ խառնվելու մոտ:

² Փուժկու վանքում պահվում էին երկու սև արագադներ, որոնք համարվում էին սուրբ: Նրանց միսը չէին ուտում, իսկ մեռնելիս պատշաճ կերպով թաղում էին: Նրանք օդի գուլակողներ էին: Երբ երեկոյան արագադները կանչին, համարում էին, որ առավոտյան պարզ և մեղմ եղանակ կլինի: Վանքում հավ պահելը արգելված էր:

Շատ հետաքրքիր էին անցնում Փուժկու այն օրերը, երբ վանքում հավաքված էին ճամբորդները: Դրանք մի փունջ էին, որոնց մեջ կային հայեր, քրդեր, լեզգիներ, ասորիներ և նույնիսկ թուրքեր Մոկսից, Սպարկերտից, Ողմից, Շիրվանից և այլ տեղերից:

Ձմեռվա երկար գիշերներին, ճամբորդների միջև տեղի էին ունենում զանազան բովանդակությամբ և զանազան բարբառներով, տարբեր լեզուներով զրույցներ, հեքիաթներ:

Խե՛հ հայը և թե՛ն օտարը խիստ հարգանքով ու երկյուղածությամբ էին վերաբերվում ոչ միայն վանքի, այլև վանքի աշխատողների, անասունների ու զուլբի հետ:

«Փուժկու մալ» անվանումը նշանակում էր անձեռնմխելի բոլորի համար, նույնիսկ գողերի: Փուժկու վանքը մեծ ազդեցություն է ունեցել, ինչպես Մոկսի, Գավաշի, նույնպես և Շատախի, Սպարկերտի, Բարվարի, Խիզանի գավառներում և նույնիսկ շատ ավելի հեռուներում: «Վանքն ամենայն հավանականությամբ փոխարինել է այն մահճանին, որի նմանը հայոց վերջին թագավոր Տիգրանը շինել է յուր եղբայր Մաժան քրմապետի գերեզմանի վրա, որպեսզի զոհերից բոլոր անցորդները վաչկեն և հյուրերն ընդունվեն գիշերն անցկացնելու»:

Քրիստոնեության շրջանում այստեղ կառուցվել են վանք և երկու եկեղեցիներ՝ իրար կողքի, որոնցից մեկն օգտագործվում էր ժամերգության համար, իսկ մյուսի մեջ պահված էր Ս. Գևորգի մասունքը: Եկեղեցիներին սպասարկում էր մի դարբաս, որի կտուրը հենվում էր չորս սյուների և պատերից բարձրացող կամարների վրա և կառուցված էր բազալտի հղկած ալյուսի խոշոր քարերով, որ դիտողին թվում էր, թե դարբասի գոյությունը հավիտենական է: Վանքի մոտ կառուցված էին վանական տնտեսության համար անհրաժեշտ շինություններ, ճանապարհորդների օթևաններ և անասունների համար գոմեր:

Տխուր է եղել Փուժկու վանքի անցյալը:

1350 թվականին Ստեփանոս գրիչն ընդօրինակում է Գրիգոր Նարեկացու «Մատենան ողբերգութեան» ձեռագիրը, որը պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Երևանի մատենադարանում № 5597-ի տակ: Ձեռագրի հիշատակարանից հայտնի է դառնում, որ Փուժկու Ս. Գևորգ վանքը 1350-ական թվականներին ունեցել է հարուստ միաբանություն: Կային ալյուսի աշքի ընկնողներ, որոնք Մոկսից գրչության ասպարեզում կարևոր դեր կատարեցին: Այդպիսիներից էր Սիմեոն կրոնավորը, որը, գրչի խոսքերով՝ «բազումս

³ «Ազգագրական հանդես», 1912 թ., № 1:

հոգայր ի վերայ մեր, ըստ հոգևոր խրատուց»⁴:

Միմեոնը, բացի գրչությամբ զբաղվելուց, եղել է նաև վարժապետ և այդ բանը նա արտահայտում է իր կողմից 1370 թվականին գրված «Լուծմունք ճառից Գրիգորի աստուածաբանի ասացյալ Դավթի մեկնչի» խորագիրը կրող ձեռագրի հիշատակարանում:

Միմեոնը գրում է իր մասին. «Միմեոն սպասաւոր բանի, առաջինս ի մեղաւորաց և վերջինս ի կարգ վարժապետաց»: Դժբախտաբար հիշատակարանում նշված չէ գրչության վայրը: Նույն ձեռագրի հիշատակարանում Ստեփանոսը հիշատակում է նաև տնտես Ապրիլուսին, որի հասցեին շուրջված գնահատության խոսքերից կարելի է եզրակացնել, որ հենց այդ ժամանակ վանքն ունեցել է բավարար տնտեսութուն և լավ եկամուտներ: Իհնո մինչև մեր վերջին օրերին, Փութկու վանքի ամենամոտիկ ձորը կոչվում էր «Տնտեսի ձոր» և գրանիտից կազմված մի փոքրիկ այլը ցույց էր տրվում որպես տնտեսի ապրած այլը:

1367 թվականին, նույն Ստեփանոսի եղբայր Հովհաննեսի կողմից գրվում է դարձյալ Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» ձեռագիրը, որի հիշատակարանում գրիչը տալիս է այն փոփոխությունները, որ եղել էին միաբանության շարքերում: Մահացած առաջնորդ Կիրակոսին փոխարինել էին Յովհաննես և Գևորգ կրոնավորները և ստվար էր մնացել միաբանության թիվը, որ վանքը դեռ պահպանում էր իր բարգավաճումը և զուցե այսպես շարունակվել է մինչև ԺԴ դարի վերջը:

Փութկու վանքի մասին ԺԴ դարի վերջին վերաբերող մի այլ տեղեկություն հանդիպում ենք Պոլսում հրատարակվող «Բյուզանդիոն» թերթի 1900 թվականի 1194 համաարում: «Այս առաքինի» կաթողիկոսին օրով (Աղթամարի Զաքարիա Բ կաթողիկոսը, 1378—1393, վախճանված Ոստանում—Ա. Շ.), Աղթամարա վանքն և թեմերն ունանք ճոխանալ սկսած էին ընտիր միաբաններով և արդյունավոր հասույթներով՝ բաղդատամբ նախորդին: Անոր թեմերն եղող Սարի Ս. Գևորգ անուն վանքն ամենին ալելի ճոխ էր այն ատեն, շնորհիվ Սորբեցի ճեմծ պուեռին և վարդապետին՝ Սարգիս վարժապետի⁵, որ ժամանակին երևելի դեմքերն էր, ծայրի նշեցվույն աշակերտը, որ իր ձեռքի ներքև աշակերտներու բազմութիւն մը ունէր նույն

վանքին մեջ: Ասոր և իր հաջորդ Վարդանի աշակերտն էր նաև Կիրակոս Վիրապեցին, որ 1441-ին եղաւ կաթողիկոս էջմիածնա:

Այս վանքը Մոկս գավառին մեջն է, Եղերով կոչված լեռան կողմին վրա: Այս ատեններ կիսալեռ նաև Հովհաննես Կախիկ Որոտնեցվույն դպրոցը, որու աշակերտներն էր... Տեր Հովհաննես քահանան, որ փրկիստփա էր, այսինքն քաջ երաժիշտ «պսակ եկեղեցույ» անուանեալ Հովհաննես վարդապետ, որ հիշեալ Ս. Գևորգա վանքին վանահայրն եղավ վերջը»:

Լենգթեմուրի մահից հետո, Հայաստանի որոշ վայրերում աննպաստ պայմաններ ստեղծվեցին հայ գրչության համար: «Ի դառն և ի նեղ ժամանակի» պայմաններում, Փութկու Ս. Գևորգ վանքում, 1418 թվականին, Ստեփանոսի առաջնորդության ժամանակ գրված Մաշտոցի հիշատակարանում, գրիչ Կարապետը հիշատակում է միայն ստացող «Մարգարէ պատուական քահանան»: 1418 թվականից հետո, Մոկսի գրչության ասպարեզում Փութկու վանքի դերը թուլացավ, վանքը անշքացավ և իր նախկին դիրքին երբեք չհասավ: Թեև Փութկու Ս. Գևորգ վանքը պահպանեց իր գոյությունը, սակայն վանքին քրդերի կողմից տրվեց «Թաքիայի միր Հասան»⁶ անունը և վանքի հարուստ արտավայրերի օգտագործումը անցավ քրդական բեկերի ձեռքը:

Մոկաց բեկերն իրենց հետ ունենալով մուլաներին և սոֆրանիներին, 1870 թվականներին վերջին անգամ փորձ արեցին Փութկու վանքի գրավման համար և վանքն անալով բողոքեցին վալիին, որպես թե վանքը քուրդերին է եղել և միր Հասանը նույնիսկ թաղված է Փութկու վանքում:

Քրդերի այդ պահանջը վանի Մահմեդ փաշան գտավ անիրավացի⁷:

Ընդհանուր առմամբ հայ ժողովրդի դրությունը սկսեց մի քիչ լավանալ այն ժամանակ, երբ դիմադրական շարժումը, թուրքա-

⁶ 1605 թվականին երկրում գրված Ավետարանի գրիչը իր հիշատակարանում գրում է սրա մասին. «Եի մերոյս պարոնութեան միր Հասանին» (Ն. Լալայան, «Ցուցակ հայերեն ձեռագրաց Վասպուրականի», Թիֆլիս, 1915 թ., էջ 820):

Մոկսի գրիչները միր Հասանի անունը չեն հիշում, սակայն նրա գերեզմանը գտնվում էր Մոկաց քաղաքի Մանգրկանց քրդաբնակ թաղում և համարվում էր սուրբ: Քրդերը նրա անունով երգվում էին: Նրա գերեզմանի մոտ կառուցված էր մադրասա, որտեղ ֆախիկները արաբական տառերով սովորում էին Ղուրանի ընթերցումը:

⁷ Տե՛ս Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ներառյալ գրական թանգարան, Խ. Լևոնյանի արխիվ, գործ 10 268—10 269:

⁴ Լ. Ս. Խաչիկյան, «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», էջ 383:

⁵ Սարգիս Սորբեցին, Արճնչի Սոսկուն գյուղի մոտ, «ալկորեալ լի աւորբք», 1401 թվականին մահացել է և թաղվել Խառաբաստա-Սուխարայի վանքում:

կան լծի տակ ճնշված ժողովուրդների հետ, ընդգրկեց նաև հայ ժողովրդին:

1887 թվականին Աղթամարի խաչատուր կաթողիկոսը, վերանորոգելով Փութկու Ս. Գևորգ վանքը, եկեղեցու պատի վրա թողեց հետևյալ արձանագրությունը.

«Կերտեցան շինուածք սոյն մեհաստանի, կից նմին մատուռն հանգստեան տեղի, Սրբոյն Գէորգայ քաջ զօրավարին, Յար ազգիս հայոց բարեխօս յերկին, Ի ձեռն խաչատուր կաթողիկոսի եւ աստուածաբնալ վեհ հայրապետի, Մախիւք և արդեամբ Արծրունեան մեծի Տանն Ախրամարայ յաւիտ պանծալի:

Յամի Տեառն 1887, յուլիս 16»:

Հիշատակության արժանի է և այն, որ խաչատուր կաթողիկոսի Մովս գալն ունեցավ և այն օգուտը, որ նա հավաքեց և Աղթամարի գրադարան տեղափոխեց Մոկսից բավական թվով ձեռագրեր, որոնք ազատվեցին կործանից և այժմ մտնում են Երևանի Մեսրոպ

Մաշտոցի անվան մատենադարանի հարուստ ֆոնդի մեջ: Թվենք դրանցից մի քանիսը. № 4922՝ Մոկսի Փառավանքից, № 6350՝ Նույն տեղից, № 5437՝ Մոկսի Ս. Կանանց վանքից, № 5873՝ Մոկաց Անջղոնց թաղից, № 6349՝ Մոկսի Բուկնց գյուղից, № 6350՝ Մոկսի Փառավանքից, № 5295՝ Մոկսի Ս. Վարդանի վանքից և այլն:

Փութկու Ս. Գևորգ վանքը ուներ երկու տոն՝ մեկը Վարդավառին և մյուսը Ս. Գևորգի տոնին, որն ընկնում էր սեպտեմբեր ամսին:

1915 թվականի հուլիսի 15-ին, տեղական բնակչության մեջ բացարձակ մեծամասնություն կազմող հայ ժողովուրդը հեռացվեց Մոկսից և նրա մեծ մասը այժմ ապրում է Սովետական Հայաստանում, Սովետական Միության այլ հանրապետություններում, ինչպես և Իրանում, Իրաքում և այլ վայրերում:

Իսկ Մոկաց վանքերը, այդ թվում և Փութկու Ս. Գևորգ վանքը, մնացին ամայացած վիճակում:

